եւ ամէն սար ու ձոր չէնլիք է. եւ Աստուծոյ պարգեւքն այն աշխարհն է, զի ամէն բանն առատ է. որ թէ ճՌ ֆլորիու հաց ուղես
125 կու գտնի: Եւ մեք մինչ ի Հռոմ էաք՝ ժողովեցան հացծախքն, գնացին առ Փափն եւ ասեն. Հայր սուրբ, այս տարի բոյսն լաւ չէ եւ ցորենն սակաւ. կու տամք Սուրբ Պետրոսի քառասուն հազար ղուռուշ. տուր մեզ հրաման
130 զհացն փոքրացնել: Իսկ Փափն խայիլ չեղաւ, այլ ասաց. Քանի կայ, եփեցէք. երբ հատնի ես ձեզ կու գտնում: Եւ նոքա ամօթով դարձան ի տունս իւրեանց: Եւ օր մի հաց չեփեցին. եւ հաց չի գտաւ ի քաղաքն. իմացուցին Փափին. եւ նա հրամայեաց գատաւորին
135 չուրջգալ. եւ նա գնացեալ ուր հաց չի գտաւ՝ զհացծախն կախեց գուռն ի վայր, որ եւ այլք իրատեսցին: Եւ առ այն է բանն մեր, որ ոչվաթ չեն ուտել բնաւ Փռանկ ազգն. եւ
140 ֆլորին այն տեղն դրամի տեղ է:

Թողլով զայլս ի բաց, եկեսցուք ի պատմութիւնս առաջարկեալ բանիս: Որպէս բազում անգամ ասացաք, թէ սրիթալն հիւանդանոց կամ հիւրանոց լսի: Արդ տեսցուք թէ
145 ո՞րպէս կարգ եւ սահմանք է նոցա: Հիւանդ ոք այր կամ կին առնուն չրիթալն, զի ամենայն եկեղեցի ունի երկու սրիթալ. մինն արանց եւ մինն կանանց. բայց նախ երթան առ մեծ քէհեան, որ է պօն սինօր, որ է քորե-

133 չերեցին: